



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

988

19

1515-4

ԱՐԴԻՇԱՆ

515

ԿԱՐՏՈՒԹԻՎ

ՄԵՎԿՈՒՅԹԻ ԴԵՐԸ

ՄԵՐ

ՀՈՂԵՏՏԵՍՈՒԹՅԱՆ

ՄԵԶ

ՊԵՏՐՈՎ - 1930 - ՁԵՐԵՎԱՆ

C18





Ն. ԿՈՒՐՂԻՆՅԱՆ


≡ԿԱՐՏՈՖԻԼԻ≡
ՄԱԿՈՒՑՅԻ ԴԵՐԸ ՄԵՐ ԺՈՂՅԵՆ-
ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵԶ



A 9549

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Երեվան—1930



Հրատ. № 1187

ԹԵՏՏՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ ՑԵՐԵՎԱՆՈՒՄ

Գրառեալվ. № 3033 (բ.)

Գաղվ. 182

Տիրում 5000

ԿԱՐՏՈՒԼԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԴԵՐԸ ՄԵՐ ՃՈՂՏՆՏԵՍՈՒ- ԹՅԱՆ ՄԵԶ

Մեր գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հետ միասին դրվում ե առանձին շրջանների համապատասխան կուլտուրաների զարգացման խնդիրը։

Հայաստանում մի շաբք շրջաններ կան, ուր կարտոֆիլն իր տեսակարար կշռով բավական մեծ տեղ ե բռնում։ Համամլվի, Ստեփանավանի, Կալմիր-Գյուղի և Ն.-Բայազետի մի շաբք շրջաններ ունեն խոշոր հնարավորություններ կարտոֆիլի կուլտուրալի զարգացման տեսակետից։ Հենց այս տարի Խ. Հայաստանում ցանկելիք կարտոֆիլի տարածության 50 տոկոսից ավելին ընկնում ե այս շրջանների վրա։

Մեր գյուղատնտեսության զարգացման հետ միասին աճել ե նաև կարտոֆիլի ցանքսերի տարածությունը։ Ալսպես, որինակ, 1926 թվին կարտոֆիլի ցանքսերի տարածությունը Հայաստանում չեղել է 7912 հեկտար։ 1930 թ. այս թիվը հասնում ե մոտ 13000 հեկտարի։ Ցանքսերի տարածությունն աճում է 60 տոկ։

Յեթե համեմատելու լինենք ցանքսերի աճումը 1927 և 1924 թ. միջև, կտեսնենք, վոր 1927 թվին աճել ե 155 տոկ., իսկ 1930 թվին 1924 թվի նկատմամբ կարտոֆիլի ցանքսերի աճումը հավասար ե 200 տոկոսի:

Կարտոֆիլի ցանքսերի տարածությունը 1926 թվին կազմել ե ընդհանուր ցանքսերի տարածության $2,6^0/_{\circ}$ -ը, իսկ յեթե վերցնենք գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքը, կտեսնենք, վոր 1928 թվին կարտոֆիլի արտադրանքը կազմել ե 5 տոկ.: 1930 թվի գյուղատնտեսության արտադրանքի մեջ կարտոֆիլի տեսակաբար կիշոր հավասար ե նույնպես 5 տ.-ի:

Այս բոլորից արվում ե հետևյալ յեղբակացությունը.

1. Մեր գյուղատնտեսության դարձացման հետ միասին զարգանում ե նաև կարտոֆիլի մշակութը:

2. Խ. Հայաստանում ցանքսերի մեջ կարտոֆիլն ավելի մեծ տեղ ե բռնում, քան Աղըրբեջանում և Վրաստանում (Հայաստանում $2,6$ տոկ., Աղըրբեջանում $0,5$ տոկ. և Վրաստանում $0,6$ տոկոս):

3. Խ. Հայաստանում կարտոֆիլի զարգացումն ունի խոշոր հեռանկարներ. Միայն այս

տարի, անցյալ տարվա համեմատությամբ, զարդանալու յե 20-ից մինչև 30 տոկոս:

Քիչ տեղ չի բռնում նաև կարտոֆիլը ժողովրդական սնունդի մեջ: Մի շաբթ շրջաններում, ուր կարտոֆիլի մշակույթն ավելի է զարդացած, շատ հաճախ նա փոխարինում ե հացի պակասորդը: Այդ գեռ քիչ ե: Բանվորական սնունդի մեջ ել մեզ մոտ բանջարեղենը ընդհանրապես և կարտոֆիլը մասնավորապես, հետքինետե բավական մեծ տեղ են բռնելու:

Կենտրոնական Վիճակաղրական Վարչության տվյալների համաձայն Հայաստանում ամեն մի շնչին որական համուռում ե—գարնան ամիսներին մոտ 200-ական գրամմ, իսկ ամառվա, աշնան և ձմեռվա ամիսներին 400-ից մինչև 800 գրամմ կարտոֆիլ: Ամենից շատ կարտոֆիլ գործածվում ե անամսապահական շրջաններում: Հենց այդ շրջաններում ել զարգացած ե կարտոֆիլի մշակույթը:

Այստեղ շատ պարզ ու վորոշ ե կարտոֆիլի դերը ժողովրդական սնունդի մեջ: Յեվ յեթե հաշվի առնելու լինենք վերջին յերկու տարում յեղած կարտոֆիլի պահանջը, պետք ե պարզ ու վորոշ ասել, վոր կարտոֆիլի մշակույթի վրա անհրաժեշտ ե հատուկ ուշադրություն դարձնել: Քիչ դեռ չի խաղում կարտոֆիլը նաև իբրև արդյունաբերական հում նյութ:

Այժմ ժողանսիորհում ծրագրվում ե Յելենովկայում կառուցել կրախմալի-սպիրտի զավոդ, վորն ամբողջապես իբրև հում նյութ ոգտագործելու յե Նոր Բայազետի շրջանների կարտոֆիլը:

Չնայելով այս բոլորին, Խ. Հայաստանում կարտոֆիլի մշակման վրա մինչև վերջեւս անհրաժեշտ ուշադրությունը չի յեղել դարձրած։ Մեզ մոտ յեղած կարտոֆիլն իր վորակով շատ յետ ե մնում։ Բերքատվությունը շատ սակավ ե։ Մշակելը տարվում ե պապենական ձևով։

Կարտոֆիլի հետագա զարգացմանը, նրա արդյունավետության բարձրացմանը ոգնելու յե կոնտրակտացիան։

Իսկ այս բոլորը հնարավոր ե միայն արտադրական ընկերությունների կազմակերպմամբ, վորոնք և ալս տարի անց են կացնելու կոնտրակտացիան։

Կարտոֆիլի ցանքսերի, կոնտրակտացիայի և յեր գյուղատնտեսության կոլեկտիվացման խնդիրներն են, վոր լուսարանվում են այս գըրքույկում։

Ի՞նչ ԲԱՆ Ե ԿՈՆՏՐԱԿՏԱՑԻԱՆ

Կոնտրակտացիա ուսերեն բառ ե, վոր նշանակում ե փոխադարձ պարտավորագիր։ Մենք գործ ենք ածում կոնտրակտացիա բառը, վորով

հետեւ այդ մտաին շատ և խռովել և զբիել և նըս
միտքը բոլորին հասկանալի յէ:

Կոնտրակտացիան կնքվում ե մի կողմից
զյուղատնտեսական կոռպերացիալի, իսկ մյուս
կողմից գուղատնտեսական մթերքներ աշտա-
ղբողների միջև:

Կոռպեր սցիան ել իր հերթին պարտավոր-
վում ե մեր արդյունաբերությանն ու սպառ-
դական կոռպերացիալին հանձնելու պահանջված
քանակով հում նյութ և կենսամթերքներ:

Գյուղկոռպերացիան այսպիսով կոնտրակ-
տացիա կապելով գուղացիության հետ, ապա-
հովում ե մեր արդյունաբերության պահանջ-
ները: Գյուղացիությունն ել կոնտրակտացիա
կապելով գյուղկոռպերացիալի հետ, հանձն ե
առնում դարձյալ ապահովել արդյունաբերու-
թյունը:

Այսպիսով թե գյուղկոռպերացիալի և թե
գյուղացիության կողմից կնքած կոնտրակտա-
ցիան ուժեղացնում ե արդյունաբերությանը:

Առժեղացած արդյունաբերությունը մատա-
կաբարում ե գյուղին և քաղաքին արդյունաբե-
րական և յերկրագործական ապրանքներ:

Այս պատճառով ել կոնտրակտացիան կա-
րեար և պառախանատու գործ ե: Արա հաջո-
ղության համար պետք ե աշխատենք մենք բո-

լորս, մանավանդ զյուղում մեր չքավոր ու միջակ գյուղացիությունը, Բացի այս բոլորից, կոնտրակտացիան նպատակ ունի նաև գարկ տալու գյուղի արտադրական ուժերին: Նա պետք է ուժեղացնի և արագացնի զյուղատնտեսության կոլեկտիվացումը: Առեն մի աշխատավոր գյուղացի պիտի լավ գիտակցի, վոր մեր զյուղատնտեսության զարգացման միակ ուղին կողեկտիվացումն եւ:

Մեր գյուղատնտեսությունը տարվում է շատ յետամնաց նախնական ձևերով: Դեռևս արորն ու տափանը մեծ տեղ են բռնում: Բացի կոլեկտիվ անտեսություններից, մնացած անտեսությունները շատ բիչ դեպքերում են գնում գյուղատնտեսի խորհուրդներով: Ցանում են, ցանում, հողը բեզարում եւ, վորի հետեանքով բերքատվությունը շատ ցածր եւ:

Կոնտրակտացիայի միջոցով մենք ավելի հեշտ կերպով արորի տեղ մտցնում ենք գութան, կիրառում ենք հողի պարագաներումը, ոգտագործում ենք աղբը: Գյուղատնտեսի ցուցանքներով մշակելով հողը՝ ստանում ենք շատ և լավ բերք:

Այսպիսով կոնտրակտացիան գյուղատնտեսության զարգացման, նրա մեջենայացման և կոլեկտիվացման ամենալավ միջոցն եւ:

Կոնտրակտացիան ամբացնում ե բանվորի և
գլ ւղացու կառլը:

Կոռպակտացիալի միջոցով տալիս ենք գոր-
ծարաններին հում նյութ, բանվորներին կենսա-
մթերք, իսկ զլուղին զյուղատնտեսական գոր-
ծիքներ և գանսազան ապրանքներ:

Հետեւապես բոլոր աշխատավոր գյուղացի-
ները պետք ե ձգտեն իրենց ցանքսերն ամբող-
ջությամբ կոնտրակտացիալի յենթարկելու:

Պետք ե ամեն մի զյուղ, ամեն մի շրջան
իր հարևան գյուղին ու շրջանին սոց. մրցման
հրավիրի:

Միաժամանակ թող հիշի և գիտակցի ամեն
մի աշխատավոր գյուղացի, վոր խորհրդային իշ-
խանությունը բոլոր միջոցները գործադրում ե
յերկը գյուղատնտեսության կոլեկտիվացման
համար: Այդ ուղղությամբ ել աշխատում ե գյուղ-
կոռպակտացիան:

— Ուժ տանք մեր զյուղատնտեսության
կոլեկտիվացմանը, — սա յե լինելու մեր բոլորի
խոսքը:

1930 թվի ԿԱՐՏՈՒԼԻ ԳԱՐՆԱՍՑԱՆԸ

Եեկող գարնանը կարտոֆիլի ցանքսը հա-
ջող տանելու համար հենց հիմիկվանից պետք ե
աշխատել:

Կարտոֆիլը մեր ժողովրդական սնունդի մեջ շատ խոշոր տեղ ե բռնում: Պետք ե մենք խոռոշոր ուշագրություն դարձնենք կարտոֆիլի մշակութիվ վրա: Անհրաժեշտ ե լայնացնել կարտոֆիլի ցանքսերի տարածությունը, լավացնել նրա մշակությունը, հետեւ գյուղատնտեսի ցուցմունքներին: Զպետք ե մոռանալ, վոր կարտոֆիլ ցանած արտից մյուս տարի ստացվում է լավ բերք:

Խորհրդակին Հայաստանում կան շրջաններ, վորաեղ կարտոֆիլի մշակությունը շատ ե առաջ գնացել: Համամլպի, Ղարաքիլիսալի, Ստեփանավանի, Կարմիր-Գյուղի, Նոր-Բայազետի և մի-քանի այլ շրջաններից կարելի յե ստանալ շատ մեծ քանակությամբ կարտոֆիլ:

Պետք ե հիշեցնել նաև, վոր հիշած շրջաններում կարտոֆիլի մշակությունը շատ շահավետ ե: Մի հեկտար կարտոֆիլի ցանքսից ստացվում ե 600-ից մինչև 800 փութ կարտոֆիլ: Լավ մշակելու դեպքում ստացվում ե 2—3 անդամ ավելի: Խորհրդային Ռուսաստանի շատ տեղերում մի հեկտարից ստացվում ե 1500-ից մինչև 2000 փ. կարտոֆիլ: Պետք ե միայն լավ մշակել, ընտրել լավ տեսակի սերմացու և լսել գյուղատնտեսի խորհուրդներին:

1929 թվին Խ. Հայաստանում կարտոֆիլի

յանքսերի տարածությունը հավասնար և լեղել
8500 հեկտարի, իսկ 1930 թ. գարնանը պետք
ե հասցնել 13000 հեկտարի։ Այս քանակը դեռ
քիչ և, պեսք ե ավելի ցանել։ Ինարկե, վոչ թե
պետք ե պակսեցվի ցորենի ու գարու ցանքսի
տարածությունը, այլ արտը փոխանակ խոզան
թողնելու, պիտի ցանել կարտոֆիլ։

Ի՞ՆՉ ՊԵՏՔ Ե ԱՆԵԼ

Հենց այժմյանից ամեն մի գյուղ, վորտեղ
ցանում են կարտոֆիլ, պետք ե մտածի անհրա-
ժեշտ քանակությամբ սերմացու ապահովել։
Գյուղում կաղմվելու յեն ցուցակներ, թե ով ինչ-
քան ե ցանելու, հաշվի առնել սերմացուն, հե-
տևել սերմացուի պահպանմանը։ Իսկ այնտեղ,
ուր կա կոլեկտիվ անտեսություն կամ նորն ե
կազմակերպվում, բոլոր միջոցները ձեռք առնել
վոր կոլեկտիվի այս տարվա ցանքսը առնվազն
25-ից մինչև 50 տոկ. ավելի լինի, քան թե ցա-
նել ելին կոլեկտիվի անդամները 1929 թվին։

Թողնված սերմացուն պետք ե լինի լավ
վորակի և տեսակի։ Լավ սերմացվից ել լավ
բերը ե լինում։ Իսկ լավ մշակելուց ել լավ և
շատ բերք ե ստացվում։ Կարտոֆիլ ցանող մեր
գյուղացիներից շատերը սերմացվի համար թող-
նում են ամենամանը կարտոֆիլը. դա սխալ ե։

Մըանից բերքը նվազ և լինում, իսկ ստացվածը
մանր:

Անհրաժեշտ և հատուկ ուշադրություն դար-
ձնել աղբելու, հողը վարելու վրա: Վոչ մի դիպ-
քում արորով չանել վարը: Արորն անպետք և
հողը փափկացնելու համար, իսկ կարտոֆիլի
տեղի հողը պետք և լավ փափկած լինի: Այս բո-
լոր աշխատանքների ծրագիրը պետք և կազմել
հենց այժմանից: Վոչ ուշ փետրվարի 15-ից վոչ
միայն ամեն մի գյուղ, այլ և ամեն մի տուն
պիտի ունենա իր ցանքսերի ծրագիրը:

Գյուղի ծրագրերը պիտի քննել կոմբջիջ-
ներում, ԼիթեՄ բջիջներում, չքավորական և մի-
ջակային ժողովներում և վերջապես գյուղխոր-
հուրդներում:

Ամեն մի աշխատավոր գյուղացի իմանալու
յե գյուղի ցանքսի տարածությունը, կոլլեկտիվի
և գյուղացիության տնտեսությունների ծրագիրը:
Ամեն մեկը պիտի հետևի, վոր ծրագիրը լրիվ
կիրառվի:

Խորհրդային իշխանությունն ու գյուղկո-
ոպերացիան իրենց ձեռքի տակ ունեցած բոլոր
լինեակներն ողտագործելու յեն գյուղացիական
տնտեսությունները դնելու արտադրական-ծրա-
գրային ուղիների վրա: Ամեն ինչ տանել ծրա-
գրաված, իրագործել ծրագրերը,—սա յե լինելու

ամեն մի աշխատավոր գյուղացու ցանկությունը:

Ավելի շատ անելիքներ ունեն կառարելու կարտոֆիլի ցանքսի նախաղատրաստական աշխատանքներում կոլեկտիվ տնտեսություններն ու գյուղարտադրական միությունները։ Այս կազմակերպություններն ավելի ծրագրված ու կանոնավոր են տանելու իրենց աշխատանքները։ Կոլտնտեսություններն, իրրև կաղմակերպված միավորներ, նախաղատրաստական աշխատանքներում առաջնորդող դեր են խաղալու։ Կոլտնտեսությունները հանդիսանալով գյուղատնտեսության սոցիալիստական ճյուղը, ապացուցելու յեն իրենց աշխատանքով, վոր կոլեկտիվ շինարարությունը անհատական տնտեսությունների հանդեպ ունի խոշորագույն առավելություններ։

Կոլեկտիվ, մինչև փետրվարի 10-ը վերջացրու քո բոլոր ծրագրերը և նախաղատրաստական աշխատանքները։ Այդ ժամկետին հայտնիր, վոր դու պատրաստ ես անցնելու անմիջական աշխատանքներից։

Դյուղական արտադրական միությունները և շատ անելիքներ ունեն։ Նրանք մի կողմից տանելու յեն կոլեկտիվացման, մյուս կողմից գարնանացանի նախաղատրաստական աշխատանքները։

Բոլոր այս աշխատանքները տանելիս պետք է առաջ բերել մասսայական շարժում։ Դյուղական վողջ աշխատավորական մասսան հանդես երերելու իր ամենաակտիվ մասնակցությունը։

Ամենալայն ձևով պիտի կիրառել սոց. մրցումը։ Սոցիալիստական մրցման են դուրս գալու վաչ միայն կոլլեկտիվներն իրար հետ, այլ և գյուղ. արտադրական միությունները, առանձին գյուղեր, շրջաններ և գյուղկոոպերացիալի շրջանալին միություններ։

Ինչ խոսք, վոր գյուղական պատի թերթերը պետք ել լույս տեսնեն կանոնավոր, առնվազն 2 շաբաթը մեկ անգամ և միշտ ել մանըամասն տան տարվող աշխատանքների պատկերը։

ԿԱՐՏՈՒԼԻ ԿՈՆՏՐԱԿՏԱՑԻԱՆ ՅԵՎ ՄԵՐ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Կարտոֆիլի կոնտրակտացիան Խ. Հալաստանում առաջին տնկամ գործադրվեց 1929 թ. գարնանը։ Դյուղկոոպերացիան պայման եր կընքել Հայկոոպի հետ, կոնտրակտացիայի լենթարկելու 1200 հեկտար կարտոֆիլի ցանք։ Գյուղկոոպերացիան ել իր հերթին ուներ պայման վարկային ընկերությունների հետ։ Բայց պետք ե ասել, վոր 1929 թվի կարտոֆիլի կոնտրակտացիան մեզ մոտ տարվեց անբավարար։

Նախ՝ վոր կոնտրակտացիայի արտադրական ընունթը համարյա թե աչքաթող եր արված։ Շնորհիվ մեր անփորձության, աշխատանքների ուշ անցնելուն, շատ քիչ նախապատրաստական աշխատանքների, մենք չկարողացանք լայն ծավալել այդ աշխատանքները։

Ցնթե կոնտրակտացիան խոշորագույն միջոց ե արտադրական խմբակներ և կոլեկտիվներ կազմակերպելու համար, 1929 թվի կարտոֆիլի կոնտրակտացիան դարկ չտվեց և վոչ մեկին։ Փաստորեն 1929 թվին կտտարվեց պարզ ավանդավորում, առանց հաշվի առնելու, վոր պետք ե բարձրացնել բերքատվությունը, բարելավել մշակումը, ուժեղացնել ապրանքայնությունը։ Ել չհնք խոսում գլուղատնտեսական ցուցմունքների և աջակցության մասին։

Կոնտրակտացիայի նպատակով բաց թողնված մոտ 85000 ռուբլին համարյա թե իր նսլատակին չըհասավ։ Գլուղացին, վորն ստանումեր վրոշ զումաշիր ցանելիք կարտոֆիլի դիմաց, համս ըյա թե վոշինչ չեր ծախում կարտոֆիլի մշակության վրա։

Բացի այդ՝ 1929 թ. գարնանը կոնտրակտացիա յեր կնքվում վոչ միայն կոլեկտիվների, այլև անհստական տնտեսությունների հետ։ Պայմաններ կնքվում և փող եր տրվում վոչ միայն չքավորին ու միջակին, այլև կուլակին։

Մինչդեռ կոնտրակտացիան գյուղացիական անտեսությունների կողեկտիվացման, արտադրության բարձրացման, չքավորին ու միջակին արտադրական միջոցներով ոգնելու մի միջոց եւ

կոնտրակտացիան չքավորին ու միջակին կաղևակեր զելու միջոցներից մեկն ե ընդլաւ կուլակի, կոնտրակտացիայի միջոցով դեպի կողեկտիվացում, կողեկտիվացումով խեղդել կուլակների դիմադրությունը:

Կուլակությունը ինքն ել դիտի, վոր կոնտրակտացիան վերջին հաշվով խփում ե իրեն, վոր նա խսկապես միջոց ե չքավորների և միջակի դաշինքի ամրացման: Ահա թե ինչու նա դեմ ե կոնտրակտացիային:

Անցկացրու կոնտրակտացիա, խփիր կուլակին: Կազմակերպիր կոնտրակտացիայի գործը, կթուլացնես կուլակի ուժը: 1930 թվի գարնան կոնտրակտացիան ավելի յե խփում կուլակին:

ՅԵԿՏԱՐ ԿԱՐՏՈՒԼԻ ԿՈՆՏՐԱԿՏԱՑԻԱ 1930 ԹՎԻՆ

Այս տարի կարտոֆիլի ցանքսից նախատեսվում ե կոնտրակտացիայի յենթարկել 2600 հեկտար, վորի կեսի չափ ընկնում ե կոլտնտեսություններին: Հետագայում հնարավոր ե կոնտրակտացիայի յենթարկվող տարածությունը՝ մեծացնել:

Հիմական խնդիրը, վոր գրքած ե գյուղկոռովերացիալի առաջ, դա կարտոֆիլի մշակման կհնարուններ ունենալին եւ Հայաստանի տնտեսական շրջանացումից հետո օենք այլևս չենք կարող ցցել մեր հնարավորությունները և կուլտուրաներին զարկ տալ բոլոր շրջաններում։ Այս տեսակետից ել մոտենալով՝ վորոշված ե այս տարում հաստկա վես միջանի շրջաններում մեծ չափով զարկ տալ կարտոֆիլի մշակութին (Համամլու, Ստեփանավան և այլն)։ Այս տարի կարտոֆիլի կոնտրակտացիան անց ե կացվելու բոլոր պին տարբեր ձևով։

ԻՆՉ ԶԵՎՈՎ Ե ԿԱՏԱՐՎԵԼՈՒ ԿՈՆՏՐԱԿՏԱՑԻԱՆ

Կոնտրակտացիա այս տարի անհատական արնատեսությունների հետ չի կնքվելու։ Գյուղկոռապերացիան կոնտրակտացիա կապելիս գործ ե ունենալու կոլեկտիվների, արտադրական գյուղական ընկերությունների և ամբողջ հողհամայնքների հետ։

Ինչպես վերեռում ասվեց, գյուղկոռապերացիան անցկացնելով կոնտրակտացիան՝ նկատի ունի կիրառելու այնպիսի ազրուկուլտուր ձեռնարկումներ, վորոնց նպատակն ե լինելու գյուղատնտեսության բարձրացումը և տեխնիկական վերակառուցումը, նրա արտադրական կոռապերացումը և կոլեկտիվացումը։

Մենք չենք դնում ագրո ձեռնարկումների անցկացումներն ընդհանրապես։ Մենք չենք դնում գյուղատնտեսության զարգացումն ընդհանրապես։

Ներկա շրջանում մեր բոլոր ձեռնարկումները նկատի ունեն գյուղատնտեսության վերակառուցումը, երա սոցիալիստական հատվածի ուժեղացումը՝ տեխնիկական բաղայի հիման վրա։

Ահա թե ինչու կոնտրակտացիալի հետ կապված մենք դնում ենք գյուղի կողեկտիվացման հարցը։ Վորովինտե գյուղատնտեսության ագրոտեխնիկական մակարդակը հնարավոր ե բարձրագնել միայն այն դեպքում, յեթե նա (գյուղատնտեսությունը) մանր անհատական ձևերից կանցնի մեծ կողեկտիվիստական ձևերին։

Յեվ այս ե պատճուր, վոր գյուղկղկոռպերացիան հրաժարվում ե այս տարի կոնտրակտացիա կապել անհատական տնտեսությունների հետ։

Ամբողջ գյուղական համայնքների հետ կոնտրակտացիա կնքելիս վերցվում ե պարտավորություն, վոր համայնքը վոչ ավելի լեռկու ամսից հետո վերածվի գյուղական արտադրական միության։ Սա նշանակում ե, վոր գյուղհամայնքը պարտավորվում ե ամենակարծամանակում դառնալ արտադրական միավոր։

Անցյալ տարվա սխալն այլիս կրկնել պետք է, յերբ կոնտրակտացիան վոչնչով շեր կտպված կոլեկտիվացման հետ:

Պետք է հաշվի առնել նաև այն, վոր զյուղական արտադրական ընկերությունն ել իր հերթին, համաձայն գոյություն ունեցող հրահանդի, վերածվելու յե կոլեկտիվ տնտեսության:

Աջրո-ձեռնարկումները, կտպված կոնտրակտացիայի հետ, հիմնականում արտահայտվելու ին հետեւալում.

ա) աղրո-ձեռնարկումների համար ֆոնդեր կազմակերպելով.

բ) հասարակական միջոցներով չքավորներին ոգնության դաշտով.

գ) սերմացվով ապահովելով, հողը ժամանակին պարարտացնելով և աղբելով.

դ) ցանքալ ժամանակին կատարելով. անհրաժեշտ քաղանությունը բուկլցնելով և կարտոֆիլը ժամանակին քանդելով.

ե) կարտոֆիլի մշակման համար անհրաժեշտ քանակի և տեսակի գործիքներ միատեղ ձեռք բերելով:

Ցեղե անցյալ տարի կարտոֆիլի կոնտրակտացիան անցկացվեց առանց գյուղատնտեսի կամ նրա խորհուրդների, այս տարի, ընդհակա-

ուակը, հատուկ մասնագետ-դլուղատնուես աշխատաբելու յե այն շրջաններում, ուր զյուղկոռավերացիան կոնտրակտացիա յե անցկացնում:

Այս բոլորի հետ միաժամանակ հատուկ ուղագրություն ե դարձվելու արտադրական միջոցների հայթալիքման վրա: Պետությունը կոռավերացիայի պիմաց դրամական ավանսավորումը փոխանակել արտադրուկուն վարկերով: Արտադրական վարկավորումը (գութաններ, լծկոնավարկ, զանազան գյուղգործիքների վարկ և այլն) հնարավորություն կտա, ազգաբնակության միջոցների հետ միասին, կազմակերպել տեխնիկական բազա:

Ամբողջ արտադրական միջոցները, վոր բաց են թողնվելու կոնտրակտացիայի գծով, վոչ թե պիտի բաժանվեն անհատ տնտեսատերերի վրա, այլ դառնալու յեն սեփականություն գյուղամայնքի կամ գյուղական արտադրական ընկերության:

ԿՈՆՏՐԱԿՏԱՑԻԱՆ ԲՈԼՈՐԻ ԳՈՐԾՆ Ե

Դյուղկոռավերացիայի շրջանակին միությունները, ստանալով իրենց շրջանի կարտոֆիլի կոնտրակտացիայի պլանը, պետք ե դրա հիման վրա կազմեն իրենց շրջանի մեջ մտնող կարտոֆիլի մշակութով զբաղվող գյուղերի պլանները:

Նախորոք նըանք հըտվիրելու յեն շըջանալին ակտիվի խորհրդակցություն՝ ծանոթացնելու և քննելու գյուղական պլանները:

Թե շըջանալին և թե գյուղական պլանները պետք եւ դարձնել վողջ աշխատավոր գյուղացիության հետաքրքրության և քննության սյութ:

Հետևաբար առանձին գյուղերի պլանները քննվելու յեն գյուղական բոլոր կազմակերպությունների ժողովներում, առաջին հերթին գյուղակտիվի և չքավորական խորհրդակցություններում։ Պլանների հետ միաժամանակ քննության նյութ են դառնալու նաև պայմանագրերը։

Գյուղական պլանը բոլոր կազմակերպություններում քննելուց և ընդունելուց հետո անհրաժեշտ եւ կազմել առանձին տնտեսատերերի համար ծրագիր։ Այստեղ պետք եւ հաշվի առնել, թե ամեն մի տնտեսություն վարքան եւ կարտոֆիլ ցանելու, ունի սերմացու և միջոցներ, ինչ պետք եւ անել, վոր չքավորները կարողանան իրենց կարտոֆիլը ցանել։ Մնցյալ տարի պատահել են շատ դեպքեր, վոր գյուղացիներն ստացել են ավանս (կանխավճար), բայց ցանքս անգամ չեն արել։ Կամ ել ստացել են մի հեկտարի ավանս, իսկ ցանել են կես հեկտար և այլն։

Հառուկ քննության նյութ պետք եւ դարձը՝
նել համարնական արտադրական միջոցների ֆոնդ
ստեղծելու ինդիբը:

Մանրամամն պիտի մշակել ծրագիր, թե
ինչ ձեռվ և միջոցներով կազմակերպել չքավոր-
ներին ոգնելու գործը:

Կոռպերացիայի տված միջոցների հետ միա-
սին պիտի դնել չքավորությանը լայն հասարա-
կական ոգնություն ցույց տալու հարցը:

ԿՈՆՏՐԱԿՏԱՑԻԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՅԵՎ ՊԱՅՄԱՆԱ- ԳՐԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՎՐԱ ՈՒՆԵՆԱԼ ԱՌԱՋԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Անցյալ տարի համարյա թե բացակայել ե
հսկողությունը ինչպես կոնտրակտացիայի անց-
կացման, նույնպիս և պայմանադրերի կիրառ-
ման վրա.

Այս տարի հսկողության գործն սկզբից
պետք եւ կանոնավորել: Հենց իրենք, աշխատա-
վոր գյուղացիները պիտի կազմակերպեն հսկո-
ղության գործը:

Այն գյուղերում, ուր կան գյուղական ար-
տադրական միություններ, կոնտրակտացիայի
պայմանագրերն ստորագրվում են միության
վարչությունների կողմից: Արտադրական ընկե-
րությունների վարչություններին ողնելու հա-

մար կոնտրակտացիայի յենթարկվող լուրաքանչչուր 20 ից մինչև 30 տնտեսության կողմից ընտրվում ե մնկական մարդ: Արդ լնտրվածները կազմում են աջակցող խմբուկ, Աջակցող խմբակը վարչության հետ սիասին հետեւելու յե, վոր կոնտրակտացիայի ծրագիրը լրիվ իրագործվի, պահանջվող շափով ցանքսը կատարվի, պայմանագրում նախատեսված ագրո-ձեռնարկումները կիրառվեն: Սրանք հետեւելու յեն նաև հետագայում կոնտրակտացիայի դիմաց կարտոֆիլի գանձման և այլն:

Այն գյուղերում,ուր չկան գյուղաբարտադրական միավորներ, և վորտեղ կանտրակտացիա յե կապվում ամբողջ գյուղհամայնքի հետ, այդտեղ ընտրվում են 5. 7 լիազորներ: Սրանք ստորագրում են պայմանագրերը, հետեւում են դրանց կիրառմանը: Միաժամանակ ընտրվում են 20. ից մինչև 30 տնտեսատիրոջ կողմից մեկական ներկայացուցիչ, վորոնք հետեւում են պայմանագրով նախատեսված ագրո-ձեռնարկումների կատարմանը:

Կոլեկտիվ տնտեսությունների հետ կոնտրակտացիա կնքելն անհրաժեշտ ե, վոր ամեն մի կոլեկտիվիստ ակտիվ մասնակցություն հանդես բերի: Սրա համար ել թե ցանքսի և թե կոնտրակտացիայի ծրագրերը դրվում են կոլ-

լեկտիվսերի ընդհանուր ժողովներին քննության համար:

Այս բոլորից հետո պարզ է, վոր թե կարտոֆիլի ցանքսի և թե կոնտրակտացիայի շուրջը պիտի առաջ բերել լայն մասսայուկան հասարակական կարծիք:

Խորհրդային պետության ձեռնարկումները հաջող են անցնում հենց նրա համար, վոր գըրանք կատարվում են լայն մասսաների միջոցով, նրանց մասնակցությամբ:

Կուսակցական և կոմսոմոլիստական կազմակերպությունների վրա ընկնում են շատ մօծ պատասխանատվություն:

Մեր կոմմունիստական և կոմսոմոլիստական բջիջները վոչ միայն առաջինն են լինելու այս չափազանց կարևոր աշխատանքի իր գործման մեջ, այլև դեկավարը:

Խորհրդային **Միության** մեջ բանվոր դասակարգը, ունենալով իր հետ աշխատավոր գյուղացիությունը, կառուցում են սոցիալիզմը: Իսկ մեր ամեն մի աշխատանք, ամեն մի ձեռնարկում հանդիպում են մեր դասակարգային թշնամիների կատաղի ընդդիմադրության:

Ներկայումս, յերբ գյուղում ավելի լե սըր-վում դասակարգային պայքարը, յերբ մենք գյուղում սոցիալիստական աշխատանքն ուժի-

դացնելով տվիլի յենք սեղմում կուլակին, պարզ է, վոր կուլակն ել իր հերթին ձգտում եւ ամեն կերպ խանդարել մեր առաջընթացմանը:

Մեր բոլոր ձեռնարկումները գյուղում ուղղ ված են կուլակի դեմ, և հենց դրա համար ել կուլակը բոլոր միջոցներով ձգտում եւ խանդարել մեղ. Մեր գասակարգային թշնամուն հաղթել ու վոչնչացնել կարող ենք մենք միայն բանվորա-դյուրացիական լախ մասսաները լավ կաղմակերպելով: Կուլակին խաղաղ ճանապարհով սոցիոլիզմի մեջ առնել և հաղթանակել՝ դա մեր գործը չի: Կուլակը մեր թշնամին եւ իսկ մախաթը մեշոկում պահել հնարատվոր չի, նա անպայման կծակի: Կուլակի նկատմամբ մենք գիտենք միայն մի միջոց—կոփի, անխնա և անվերջ կոփի:

Ահա թե ինչու մենք կուլակի հետ կոնտրակտացիա չենք կնքելու, Մենք կուլակի ավելցուկը վերցնելու միջոցները շատ լավ գիտենք: Նա ես տարի յել չեր ուզում իր ավելցուկի ացնու կարտոֆիլը տալ, բայց չքափորների և միջակների ճնշման տակ շատ Շխելոքությամբ տվեց: Նման միջոցներ մենք միշտ ել կձեռնորկենք կուլակի նկատմամբ, բայց նրա հետ կոնտրակտացիա չենք կնքի:

Մեր այս տարվա կոնտրակտացիակի հաջող

անցկացումը, պայմանագրերի լրիվ կիրառումը
միաժամանակ գրավական և աշնան կարտոֆիլի
մթերութերի:

Պարտք հանձն տոնելով բանվոր զասակարգի
առջև նրա սննդամթերքի մատակարարման տե-
սակետից, պետք է կատարել ավելի քան $100^{\circ}/_0$,
ինչպես բանվոր դասակարգն ե, արդյունաբե-
րության մեջ, միշտ ել կատարելով $100^{\circ}/_0$ ից
ավելին:

Կարօնքի ցանխերի տարածությունը Հայաստանում

| | Տոկոսներով |
|---------------------------------------|------------------------------|
| 1926 թվին յեղել ե | 7912 հեկ. $100^{\circ}/_0$ |
| 1930 թվին նախատես. և մոտ 13000 հեկ. | $160^{\circ}/_0$ |

Կոնյակացիա

1929 թվին նախատեսվել ե 750 հեկտար, կա-
տարված ե 240 հեկտար. Կատարված ե ծրագրի
 $32^{\circ}/_0$ իսկ ցանքսերի $3^{\circ}/_0$ միայն:

1930 թ. նախատեսվում ե անցկացնել կոնյակակ-
տացիա արտ. միավորների գծով 1250 հեկտ. ($40^{\circ}/_0$)
Կոլեկտիվ տնտեսություններում 1709 » ($54^{\circ}/_0$)
Խորհրդային տնտեսություններում 200 » ($6^{\circ}/_0$)

3159 հեկտար


Այսպիսով 1930 թվին կոնյակակտացիայի յե յեն-
թարկվելու կարտոֆիլի ամբողջ ցանքսերի մոտ $25^{\circ}/_0$ -ը:

Կարսոֆիլի կոնյակտացիալի ծրագիրն ըստ շրջանների


| Շրջան. | Կոլտնտեսութ, | Գյուղաբան. | Խորհ. տնտ. | միութ. |
|------------------|--------------|------------|------------|--------|
| 1. Արարանի | 28,5 հեկտ. | 50 հեկտ. | | |
| 2. Դուղքանդի | 50 | » | 150 հեկտ. | |
| 3. Համամլլի | 84 | » | 300 | » |
| 4. Ախտայի | 40 | » | | |
| 5. Բասարդիչարի | 85 | » | 50 | » |
| 6. Մարտունու | 60 | » | 100 | » |
| 7. Կարմիր-Գյուղի | 77 | » | 350 | » |
| 8. Ն.-Բայազետի | 75 | » | | |
| 9. Դարձաքիլիսայի | 150 | » | 400 | » |
| 10. Սոփիանով. | 1000 | » | | |
| 11. Գորիսի | 60 | » | | |
| <hr/> | | | | |
| Ընդամենը | 1709 հեկտ. | 1250 հեկտ. | 200 հեկտ. | |

Յուրաքանչյուր հեկտարի դիմաց նախատեսվում եւ ստանալ կանտրակտացիա կնքած անտեսություններից 240 փութ:

Այսպիսով առաջիկա 1930 թ. մթերումների մոտ 90 տոկոսն ապահովվում եւ կոնտրակտացիաի դիմաց ստացվելիք կարտոֆիլով:









ԳԱԱ Հիմնարար Գիտ. Օրադ.



FL0045938

(064.)

— ԳԻՒԸ 5 ԿՈՊ. ԾԱՍ. (1 մամլու)

A 95



Н. Кургавян

Роль культуры картофеля в нашем
нар. хозяйстве

Госиздат СССР Армении
Эревань — 1930